

Լրատու

Լոյս կը տեսնէ 2006 թ. Սեպտեմբերին

Թիւ 9

Կիպրոսի Յամայնի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

ՅՈՒԼԻՍ 2013

Սիրելի հայրենակիցներ,

Վստահաբար այս ծանր տնտեսական պայմաններուն տակ, ինձմէ կը սպասէք լաւատեսութիւն ներշնչող մի քանի խօսքեր կամ մօտ ապագային աւելի լաւ ըլլալու հաւանականութիւն, սակայն իրականութիւնը դժբախտաբար այդպէս չէ, սիրելիներ: Մեր դիմաց ունինք բաւական դժուար տարիներ, որ պէտք է դիմագրաւենք մեծ համբերութեամբ, գիտակցութեամբ եւ ամենակարեւորը՝ առանց յուսահատելու:

Կիպրոսի ժողովուրդը այս օրերուս շատ սուր գին կը վճարէ վերականգնելու համար իր երենինի բարօր կեանքը: Երկար տարիներու անփութութեան պատճառով, մեր չքնաղ կղզին հասաւ անդունդի եզրին: Անգործութեան թիւը այս ամիս հասաւ եօթանասունինգ հազարի: Սակայն, կը հաւատամ թէ միասնաբար, ծեռք ծեռքի տալով ու աւելի առողջ եւ դրական մօտեցում ցուցաբերելով, պիտի կարենանք յաղթահարել այս ծանրակշիռ տարիները:

Գալով մեր գրասենեակի եւ Կիպրահայ գաղութի ներքին ու ազգային կեանքին, հակառակ երկրին տնտեսական իրավիճակին, ծրագրուած ձեռնարկներու եւ միջոցառումներու հոլովութը շարունակուեցաւ սովորական ծեւով: Այս եռամսեան եղաւ բաւական բեղուն ու արդիւնաւէտ, մեզմէ յւելով երկար ժամերու աշխատանք: «Լրատու»ի յաջորդող էջերուն մէջ անդրադարձած ենք անոնց մասին:

Յուլիս 14-27, Նարեկ Վարժարանի շրջանաւարտները ընկերակցութեամբ երկու ուսուցչուիներու, պիտի մեկնին

Հայաստան: Անոնց կը մաղթեմ բարի վայելում, աննոռանալի շրջապատոյտ, ինչպէս նաեւ՝ ապահով վերադարձ:

Ինչ կը վերաբերի «ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոնին, արդէն տեղեակ էք, 2 Սեպտեմբեր 2013-ին, մանկամսուրը օրինաւոր կերպով պիտի սկսի գործել, մեր Երեխաները ընդունելով ապահով միջավայրի մէջ: Տեղին է յիշել, թէ ամսական վճարումները ներկայ պայմաններուն տակ, խղճմտօրէն ուսումնասիրուած ու սերտուած են եւ բաղդատմանք պետական ու անձնական մանկամսուրներուն, բաւական ծեռնտու են չժանրաբեռնելու համար ծնողները:

Այս բոլորին կողքին, Երեսփոխանական Գրասենեակը իր տարեկան Կիպրոս-Հայաստան մշակութային յարաբերութեան ծիրէն ներս, ծրագրած է Հայրենի «Ժողովրդական Երգիչ» նախագիծի ամենալաւագոյն երգիչ-երգչուիհիները հրաւիրել Կիպրոս, միայն մէկ ելոյթ ունենալու համար, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 9 Նոյեմբեր 2013-ին, Ստրովոլոսի Քաղաքապետարանի սրահին մէջ, Երեկոյեան ժամը 19:00-ին: Յոյսով ենք, որ գոնէ մէկ գիշերուայ համար, պիտի կարողանանք ծեզի պարգևել հաճելի պահեր մոռնալու ծեր առօրեայ հոգերն ու դժուարութիւները:

Խօսքիս աւարտին, բոլորիդ կը մաղթեմ հանդարտ ու կազդուրիչ ամառնային արձակուրդ:

Վարդգէս Մահտեսեան

Կիպրոսի Հանայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Վերջին մի քանի ամիսներուն երկրտն ներս տիրող տըն-տեսական ճգնաժամին հետեւանքով, Կիպրոս բնակու-թիւն հաստատած մեր հայրենակիցներուն կեցութեան հարցերը խիստ բարդացած են: Աշխատանքային Բաժան-մունքին կողմէ օտարահպատակներու աշխատանքի հրա-մաններու սահմանափակումներ առաջարրուած են, իսկ Ներքին Գործոց Նախարարութեան կողմէ տրուած արտօ-նութիւնները զգալիօրէն պակսած են, Կիպրոսէն ներս ան-գործութեան համեմատութիւնը նուազեցնելու նպատա-կով:

Դու յիշենք, թէ վերջերս տեղի ունեցաւ նաեւ սակերու անհամեմատելի փոփոխութիւն, ինչ կը վերաբերի Ներքին Գործոց Նախարարութեան Օտարահպատակներու եւ Ներգաղի Բաժանմունքի զանազան դիմումներու ձեւե-րուն, քաղաքացիութեան դիմումներուն, ինչպէս նաեւ Նա-հանգային Գրասենեակի տարբեր տեսակի փաստաթուղ-թեր ապահովելու կապակցութեամբ:

Ապրիլեան Եղեռնի 98-րդ տարելիցի ոգեկոչման ձեռնարկներ

Հինգաբթի, 18 Ապրիլին, Կիպրոսի Համայնքի Պե-տական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, Ապ-րիլեան Եղեռնի 98-րդ տարելիցի ոգեկոչման առիթով, ե-լոյթ ունեցաւ Կիպրոսի խորհրդարանէն ներս, ներկայու-թեամբ խորհրդարանի բոլոր անդամներուն:

Պրն. Մահտեսեանի ելոյթն ետք, խորհրդարանի ան-դամները մէկ վայրկեան յոտնկայս լրութեամբ յարգեցին Հայոց Ցեղասպանութեան 1.5 միլիոն անմեղ նահատակ-ներու յիշատակը:



Կազմակերպութեամբ Հայկական Ցեղասպանութեան Կիալրոսի Ոգեկոչման Յանձնախումբին, Ապրիլեան ծեռնարկներու մեկնակետը սկսաւ Շաբաթ, 20 Ապրիլ 2013-ին, շուրջ 30 անհատներու արինի տուչութեամբ, Նիկոսիոյ

Նարեկ Վարժարանին մէջ:

Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2013-ին առաւօտեան, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ Եւ Հոգեհանգստեան արարողութիւն՝ ի յիշատակ 1.5 միլիոն նահատակներուն:

Նոյն օրը, Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2013-ին, կ.ե. Ժամը 6:00-ին, Նիկոսիոյ քաղաքի Մակարիոս պողոտայէն սկիզբ առաւ Երիտասարդութեան քայլարշաւը ուղղուելով դէպի Արմենիաս Եւ Լիճասոլ պողոտաներու խաչմերուկ, ուր անոնց միացան համայնքի մնացեալ անդամները, յառաջանալով դէպի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ շրջափակը: Եղենի Նահատակներու Յուշահամալիրին առջեւ, Երևոյեան Ժամը 7:30-ին, տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն գլխաւորութեամբ թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Վարուժան Արքեախսկոպոս Յերկելեանի: Խսկումի միջոցառումը կը վայելէր Ստրովոլոսի քաղաքապետ Դոկտ. Լազարոս Սավիտիսի հովանաւորութիւնը:



Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Վարուժան Արք. իր պատգամին մէջ ընդգծեց, թէ Հայաստանի Հանրապետութիւնն ու Սփյուռքը պէտք է համախմբեն իրենց ուժերը եւ միասնաբար աշխատանք տանին աշխարհին յիշեցնելու Հայկական Ցեղասպանութիւնը՝ պահանջելով արդարութիւն, ապա պէտք է լուսաբանեն Թուղթ Ժողովուրդը Ցեղասպանութեան իրականութեան մասին: Ան շարունակեց ըսելով, թէ արդարութեան հաստատումը աշխարհի բոլոր Ժողովուրդներուն պարտականութիւնն է, որպէսզի կանխարգիլուին նորանոր ցեղասպանութիւններու գործադրումը:

Կիպորհայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգև Մահտեսեան խօսք առնելով իր պատգամին մէջ շեշտեց, թէ մեր պահանջքը արդար հատուցում է եւ ո՛չ թէ վրէժիսնդրութիւն: Ան ըսաւ, թէ ոչինչ կրնայ քողարկուիլ արեւու լոյսին տակ, սակայն արդարութեան արեւը տա-



կաւին քիչ մը ժամանակի կը կարօսի լրիւ փայլելու համար: Կիպորսը աշխարհի երկրորդ եւ Եւրոպական առաջին երկիրը հանդիսացաւ 1975-ին ճամշնալով Հայկական Ցեղասպանութիւնը: Մօտաւորապէս 100 երկար տարիներ անցած են Հայկական Ցեղասպանութենէն եւ Հայ Ժողովուրդը դիմագրաւած է ահաւոր դժուարութիւններ: Հակառակ մեծ պետութիւններու շահերուն, որոնք ընդհանրապէս ի նպաստ Թուրքիոյ եղած են, կը սպասենք Միացեալ

Նահանգներու նախագահէն, որ պարտադրէ Թուրքիոյ ներողութիւն խնդրել Հայ ու Կիպրացի ժողովուրդներէն:

Վերջաւորութեան, Պետական Ներկայացուցիչը իր խօսքը Եզրափակեց ըսելով, թէ Հայկական Ցեղասպանութեան ոգեկոչման առիթով, Կիպրոսի ժողովուրդին պագայի լաւատեսութեան կոչ կ'ուղղէ: Հայ ժողովուրդի պատմութենէն դասեր քաղելով եւ մղած երկարատեւ պայքարը օրինակ ունենալով, Կիպրոսի ժողովուրդը պէտք է յանառ աշխատանքով առաջ ընթանայ գլուխմերը բարձր պահած, որպէսզի կարողանայ դուրս գալ այս չափազանց դժուար տնտեսական ճգնաժամէն:

Օրուայ ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ Ստրովոլոսի քաղաքապետ Դոկտ. Լազարոս Սավիտիս յայտնելով, թէ մեծ ուրախութեամբ, յատուկ յարգանքով եւ միեւնոյն ժամանակ խոր զգացմունքներով Ներկայ կը գտնուի Հայկական Ցեղասպանութեան 98-րդ տարելիցի ոգեկոչման հանդիսութեան տալով իր հովանաւորութիւնը: Ան հակիրծ ծեւով Ներկայացուց Հայ ժողովուրդի պատմականը, սկըսեալ 1894 թուականի Սասունի եւ Մուշի Համիտեան սպանդներէն, հասնելով մինչեւ 1915-1923-ի Հայկական Ցեղասպանութիւնը ու Հայ ժողովուրդի գանգուածային գաղթը դէպի օտար երկիրներ՝ Ներառեալ Կիպրոս: Շարունակելով իր խօսքը, ան նմանութիւն մը գտաւ Հայ եւ Կիպրացի ժողովուրդներուն ոիմագրաւած պատմական անարդարութեան մէջ, պահանջելով մեծ պետութիւններէն պարտադրել Թուրքիոյ ընդունելու իր գործած ոճիրները: Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը՝ հիմնաքարող ահտի հանդիսանայ Թուրքիոյ արդիականացման, որ կը փափաքի ընդգրկուիլ Եւրոպական Միութեան մեծ ընտանիքին մէք:

Եզրափակելով ողջոյնի խօսքը, Դոկտ. Լազարոս Սավիտիս իր յարգանքը արտայայտեց՝ ի յիշատակ նահատակ-

ւած հայ քոյրերուն եւ եղբայրներուն, ինչպէս նաեւ իր մեծ հիացմունքը Կիպրահայ ու ընդհանրապէս Դայ ժողովուրդին հանդէա, որոնք յարատեւ Կիպրոսի կողքին եղած են եւ կարողացած են վերականգնել իրենց հայրենիքը եւ արժանապատութիւնը:

Հսկումի վերջաւորութեան Ելոյթ ունեցաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Երգչախումբը, որմէ Ետք տեղի ունեցաւ ծաղկեպսակներու զետեղում՝ ձեռամբ կուսակցապետերու ներկայացուցիչներուն, Երեսփոխաններուն, դեսպաններուն եւ այլ բարձրաստիճան պաշտօնակատարներուն:

«ՆԱՆՈՐ» կրտսեր պարախումբի բացառիկ Ելոյթ



Չաբաթ, 11 Մայիս 2013-ին, Ստրովոլոսի Քաղաքապետարանի սրահին մէջ, մեծ յաջողութեամբ տեղի ունեցաւ Դամազգայինի «Սիփան» պարախումբի տարեկան Ելոյթը, որու ընթացքին 55 անդամ հաշուող «Նանօր» կրտսերներու պարախումբը, մեծ բաժին ունենալով, տպաւորեց ու հնայեց հայ եւ օտար հասարակութիւնը: Անթերի կատարումով, Երկարաժամ փորձերէ Ետք, պարուսոյց Պրն. Պետրոս Ղարիպեանի գլխաւորութեամբ, «Նանօր» կըրտսերներու պարախումբը եկաւ փաստելու, թէ միասնական

կամքով ու լուրջ մօտեցումով կարելի է հասնիլ բարձր արդիւնքներու: Ելոյթէն ետք, պետական բարձրաստիճան հրակիրեալներն ու դեսպանները ջերմօրէն շնորհաւորեցին Պետական Ներկայացուցիչը իր նախաձեռնութեան համար:

Ուխտագնացութիւն դէպի Մակարավանք



Կազմակերպութեամբ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեանի եւ գործակցութեամբ Ազգային Առաջնորդարանի, Վեցերորդ անգամ ըլլալով, Կիրակի, 19 Մայիս 2013-ին մեծ յաջողութեամբ իրականացաւ դէպի Սուլը Մակարայ վանք ուխտագնացութիւնը, մասնակցութեամբ շուրջ 150 Կիպրահայերու եւ դուրսէն ժամանած հայրենակիցներու:

Ուխտագնացութիւնը, ինչպէս միշտ, կը վայելէր Կիպրո-

սի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (UNFICYP) հսկողութիւնը:

Ս. Մակարյա վաճքի քարուքանդ ու անմխիթար խորանին դիմաց տեղի ունեցաւ պատշաճ եկեղեցական արարողութիւն S. Վարուժան Արքեպիսկոպոսի եւ Տէր Մոնիկ Քահանայի մասնակցութեամբ, որու ընթացքին ուխտագնացները նորոգեցին իրենց ուխտը եւ հաստատակամութիւնը՝ կառչած մնալու հայապատկան մեր վաճքին:

Վերադարձին, անոնք հոգեական գոհացած, շնորհակալութիւն յայտնեցին Պետական Ներկայացուցիչին, բժախնդորէն կազմակերպած ըլլալուն համար այս ուխտագնացութիւնը:

«ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոն

Արդէն իսկ տեղեակ էք, թէ Երկուշաբթի, 2 Մեպտեմբեր 2013-ին, առաջին անգամ ըլլալով օրինաւոր կերպով պիտի սկսի գործել «ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոնը, Նիկոսիյ Նարեկ Վարժարանի կառոյցէն ներս: Շուրջ տարի մը տեւած շինարարական, ներքին կահաւորման եւ վարչական աշխատանքները աւարտած ըլլալով, այս անհրաժեշտ հաստատութեան ստեղծումը, վերջապէս իրականութիւն կը դառնայ Կիպրահայ գաղութի կեանքէն ներս: Դրութիւն մը, ծեռնտու թէ ծնողներուն եւ թէ փոքրիկներուն, որ անկասկած պիտի նպաստէ նաեւ մեր գաղութի հայապահպանման նպատակին:

Տեղին է յիշել, թէ Կեդրոնը ոչ հասութաբեր հաստատութիւն մըն է եւ պիտի կառավարուի հինգ հոգիէ բաղկացած ու նշանակուած Վարչական Խորհուրդին կողմէ:

Նարեկ Հայկական Վարժարաններու կեանքէն

Չորեքշաբթի, 29 Մայիս 2013-ին, տեղի ունեցաւ Նարեկ Վարժարաններու տարեկան մարզահանդէսը, հովանաւո-

րութեամբ Տէր Վարուժան Արքեպիսկոպոս Յերկելեանի եւ նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչի: Զեռնարկի աւարտին, Պրմ. Մահտեսեան կատարեց մետալերու յանձնում առաջնակարգ դիրքերը գրաւող բոլոր աշակերտներուն:



Չորեքշաբթի, 19 Յունիս 2013-ին, տեղի ունեցաւ Նարեկ Վարժարաններու նախակրթարանի եւ Միջնակարգի ամավերջի հանդէսը, հովանաւորութեամբ Կաթողիկոսական Փոխանորդ Տ. Վարուժան Արքեպիսկոպոսի եւ նախագահութեամբ Պրմ. Վարդգէս Մահտեսեանի: Յանդէսի վերջաւորութեան, Վարուժան Արքեպիսկոպոս Յերկելեան եւ Պրմ. Մահտեսեան կատարեցին վկայականներու բաշխում, իսկ Պրմ. Մահտեսեան շրջանաւարտներուն եւ ընկերակցող ուսուցիչներուն յանձնեց աւանդութիւն դարձած իր նուէրը՝ Յայաստան շրջապոյսի պահարանները:

Յաջորդ օրը, Յինգշաբթի, 20 Յունիս 2013-ին, ըստ աւանդութեան Նարեկի շրջանաւարտները, տնօրէնութիւնն



ու ուսուցչական կազմը, ինչպէս նաև կղզիի բոլոր հայ շրջանաւարտները, ներկայութեամբ Վարուժան Արքեպիսկոպոսի եւ Տէր Մոմիկ Քահանայի, հիւրասիրուեցան Տէր եւ Տիկին Վարդգէս Սահտեսեամներու բնակարանը:

Չեռնարկներու ներկայութիւն

Հինգշաբթի, 4 Ապրիլ եւ Շաբաթ, 6 Ապրիլ 2013-ի երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Սահտեսեամներ յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Լիմասոլի Monte Caputo շրեղ հանդիսասրահին մէջ տեղի ունեցած Rotarian District 2450 խորհրդաժողովի բացման եւ փակման արարողութեան, որուն Կառավարիչն է Պրն. Գէորգ Սահտեսեան: Նշենք, որ այս զոյգ արարողութիւններուն քանի մը պարերով իր մասնակցութիւնը բերաւ Յամագգայինի «Օշական» մասնաճիւղի «Սիփան» պարախումբը, մեծ տպաւորութիւն ձգելով խորհրդաժողովին մասնակից երկիրներու ներկայացուցիչներուն եւ օտար ու Կիպրացի հրաւիրեալներուն մօտ:

Հինգշաբթի, 11 Ապրիլ 2013-ի յետմիջօրէին, Պետական

Ներկայացուցիչը եւ Տիկինը, ներկայ գտնուեցան Կաթողիկէ համայնքի Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ մատուցուած Եկեղեցական արարողութեան, ի այսի նորմնտրեալ ֆրամշիսկօ Ա. Պապի, որու յաջորդեց հիւրասիրութիւն:

Նոյն օրը Երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսամներ ներկայ գտնուեցան Յնդկաստանի դեսպանատան մէջ տեղի ունեցած հիւրասիրութեան, Յնդկաստանի Արտաքին Գործոց Նախարարին Կիպրոս այցելութեան առիթով:

Ուրբաթ, 12 Ապրիլ 2013-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Կիպրոսի Սիմֆոնիք նուազախումբին եւ Գալայճեան Յիմնարկին կազմակերպած «Յայկական եւ Իտալական Երաժշտական Երեկոյ»ին, որ տեղի ունեցաւ Ստրովոլոսի Քաղաքապետարանի սրահին մէջ: Այս միջոցառումը կը վայելէր հայրենի վաստակաւոր խմբավար Պրն. Վարդան Յակոբեանի, սովորանո Տիկին Սոնա Կարկալոյեանի եւ պարիթոն Ալեքս Մոսկովիտեանի մասնակցութիւնը: Ելոյթի վերջաւորութեան, Պրն. Մահտեսեան անձամբ շնորհաւորեց զանոնք:

Շաբաթ, 13 Ապրիլ 2013-ին, Պրն. Մահտեսեան հրաւիրուեցաւ մասնակցելու Thoukidides Յետազօտական Կեդրոնի կազմակերպած միօրեայ համաժողովին՝ «Տիենան եւ ընտրութիւններ յաջորդ օրուայ համար» նիւթով, որ տեղի ունեցաւ Ստրովոլոսի Քաղաքապետարանին մէջ:

Նոյն օրը Երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսամներ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Տիկին Մակի Յալաճեան-Էսքիճեանի «Ծիածանի Յետքերով» գիրքի գինեծօնին, որ տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի «Վ. Իթիւճեան» սրահին մէջ: Գիրքը ներկայացուց Յամբիկ Մարտիրոսեան: Այս հրատարակութեան ուրախ առիթով, Պրն. Մահտեսեան շնորհաւորագիր մը յղեց

գիրքի հեղինակին, գնահատելով անոր աշխատութիւնը:

Շաբաթ, 20 Ապրիլ 2013-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, յատուկ հրաւեր ստանալով, ներկայ գրտնութեան «Երաժշտական երեկոյ՝ նուիրուած ճիւկիթա Մովսիսեանի յիշատակին» ելոյթին, որ տեղի ունեցաւ Քասթէլիոտիսսա սրահին մէջ, մասնակցութեամբ սովորանո Զարա Բարխուդարեանի, դաշնակի ընկերակցութեամբ Նարա Գերգեան-Դամիելեանի, ինչպէս նաև Գոռ Սելեանի եւ Մարիոս Անտրէուի:

Ուրբաթ, 10 Մայիս 2013-ին, Պրն. Վարդգէս Մահտեսան, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնութեաւ «Արարատ»ի եւ «Օմոնիա»ի միջեւ տեղի ունեցած ֆութսալի աւարտական մրցումին:

Ուրբաթ, 17 Մայիս 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ներկայ գտնութեան Կիպրոսի Յայ Ալետարանական եկեղեցւոյ կազմակերպած «Սարդարապատով վերածնուած հայրենիք» միջոցառումին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Վ. Իւթիւնեան» սրահին մէջ, հովանաւորութեամբ Գերշ. Տէր Վարուժան Արքեպիսկոպոս Յերկելեանի եւ նախագահութեամբ Պետական Ներկայացուցիչի: Օրուան խորհուրդը ներկայացուց Պրն. Միհրան ճիզմէնեան, իսկ գեղարուեստական բաժինով հանդէս եկաւ ասմունքող Տիկին Իրմա Գապարեան-Տէտէեան:

Չորեքշաբթի, 22 Մայիս 2013-ին, Պետական Ներկայացուցիչը ու Տիկինը, ներկայ գտնութեան Կիպրոսի Յայ Դատի կազմակերպած «Կիլիկիոյ եւ Արեւմտահայաստանի մասին» տեսալսողական երեկոյին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Վ. Իւթիւնեան» սրահին մէջ: Օրուան պատգամաբերն էր Տիկին Լինտա Այնթապլեան:

Չորեքշաբթի, 29 Մայիս 2013-ին, Պրն. Վարդգէս Մահտեսան ներկայ գտնութեաւ Ակրոպոլիս Փարքին մէջ տեղի ունեցած «Խաղաղ Գոյակցութիւն» թեմայով մշակու-

թային միջոցառումին, նախաձեռնութեամբ ՄԱԿ-ի անդամ կազմակերպութիւններու, որու ընթացքին իր մասնակցութիւնը բերաւ Յանազգայինի «Սիփան» Պարախումբը:

Շաբաթ, 1 Յունիս 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գրտնուեցան ՀՅԴ Կիպրոսի Կոմիտէի եւ յարակից միութիւններուն կազմակերպած Յայաստանի Ա. Յանրապետութեան 95-ամեակի հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահին մէջ: Օրուան բանախօսն էր Պր. Սիմոն Այնէճեան:

Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ծերնարկներ

Չորեքշաբթի, 10 Ապրիլ 2013-ի առաւտեան, Պր. Վարդգէս Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ Ստորվուսի Քաղաքապետ Դոկտ. Լազարոս Սավիտիսին հետ, քննելու Կիպրահայ համայնքին հետ առնչութիւն ունեցող



կարգ մը հարցեր: Այս առիթով, ան իր ու Կիպրահայ համայնքին անունով արձանագրութիւն մը ձգեց Քաղաքապետարանի յուշամատեանին մէջ:

Նոյն օրը, Պետական Ներկայացուցիչը, իր խորհրդարանի գրասենեակին մէջ, ծանօթացման համդիպումներ ունեցաւ Տաճարաբայի դեսպան Տիկին Քրիստէն Կիլանի, Ֆինլանտայի դեսպան Տիկին Անիու Սաարէլայի եւ Շուէտի դեսպան Պիրն. Կլաս Կիերոյի հետ:

Քինգշաբթի, 25 Ապրիլ 2013-ին, Կիպրոսի Մարոնիթ, Հայ եւ Լատին համայնքներու ներկայացուցիչները, հանդիպում մը ունեցան Փոքրամասնութիւններու Հարցերու Յանձնակատար Տիկին Բէրի Քլիրիտուկի հետ, երեք համայնքները յուզող զանազան խնդիրներու կապակցութեամբ:

Երկուշաբթի, 29 Ապրիլ 2013-ին, Պետական Ներկայացուցիչը եւ Թեմական ժողովի Ատենապետ Պիրն. Սեպուհ Դաւիթեան, հանդիպում մը ունեցան Միացեալ Նահանգներու Դեսպան Ն.Վ. Պիրն. Շոն Քէօնիկի հետ, Կիպրոսի գրաւեալ շրջանի հայապատկան Եկեղեցական համալիրին հարցով:

Քինգշաբթի, 23 Մայիս 2013-ին, երեք Կրօնական Փոքրամասնութիւններու ներկայացուցիչները տեսակցութիւն մը ունեցան Օրէնքի Յանձնակատար Տիկին Լիտա Քուրսումապայի հետ, քննելու Շրջանային կամ Փոքրամասնութիւններու Լեզուներու Եւրոպական Քիմնաթուղթի (European Charter for Regional or Minority Languages) տեղեկագիրը:

Ուրբաթ, 24 Մայիս 2013-ին, Պետական Ներկայացուցիչը ծանօթացման համդիպում մը ունեցաւ Սլովաքիոյ նորանշանակ դեսպան Տիկին Օսկանա Թոմովսայի հետ:

Երեքշաբթի, 4 Յունիս 2013-ին, Պիրն. Վարդգես Մահտեսան հանդիպում մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարար

Պրն. Սոկրատիս Խասիկոսի հետ, քննելու Կիպրոսի դիմագրաւած դժուար տնտեսական պայմաններու լոյսին տակ Կիպրոս բնակութիւն հաստատած օտարահպատակ հայերուն հարցերը:



Ուրբաթ, 21 Յունիս 2013-ին, Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ Կրթութեան եւ Մշակոյթի Նախարար Պրն. Կիրիակոս Կէնէվէզոսի հետ, գաղափարներ փոխանակելու կրթական ոլորտեն ներս հայ համայնքը յուզող խնդիրներու շուրջ:

Չորեքշաբթի, 26 Յունիս 2013ին, Պրն. Վարդգես Մահտեսեան լրացուցիչ հանդիպում մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարարութեան Ընդհանուր Տնօրէն Պրն. Անտրէաս Աշխոտիսի հետ, Կիպրոս բնակութիւն հաստատած հայ օտարահպատակներուն հարցերուն գծով:

Զօրակոչիկներու հանդիպում

Ուրբաթ, 28 Յունիս 2013-ի երեկոյեան, Պետական Ներկայացուցիչի Գրասենեակ Անդրկայացան 2012-2013-ի բանակի ծառայութեան թեկնածուները, ընկերակցութեամբ կարգ մը ծնողներու: Պրն. Մահտեսեան խօսք առնելով, լայն կետերու մէջ փոխանցեց բանակի ծառայութեան դրական կողմերը եւ յորդորեց անոնց համակերպիլ աւագ զինուորական պատասխանատուներու ցուցմունքներուն: Ան նաեւ հաստատեց իր պատրաստակամութիւնը անոնց կողքին կանգնելու՝ տրամաբանական դժուարութիւններու պարագային:

Շնորհաւորագիր

Հինգշաբթի, 4 Ապրիլ 2013-ին, Պրմ. Մահտեսեան նամակ մը յղելով շնորհաւորեց Տիկին Զետա Էմիլիանիտուն, Աշխատանքի եւ Ընկերային Ապահովագրութեան Նախարար նշանակուելուն ուրախ առիթով:

Ուրբաթ, 19 Ապրիլ 2013-ին, Պետական ներկայացուցիչը անջատ գիրերով, շնորհաւորեց Կիպրոսի Հանրապետութեան մօս Լիբանանի նորանշանակ Դեսպան Դոկտ. Եուսէֆ Սատարքան եւ Սլովաքիոյ նորանշանակ Դեսպան Տիկին Օսքանա Թոմովան:

Երկուշաբթի, 13 Մայիս 2013-ին, Պրմ. Վարդգէս Մահտեսեան նամակով մը շնորհաւորեց Համազգայինի Կիպրոսի «Օշական» Մասնաճիւղի վարչութեան տարած տղթնաջան աշխատանքը, որ դրսեւորուեցաւ «Սիփան» պարախումբի բացառիկ ելոյթով, մաղթելով յարատեւութիւն մշակութային իրենց առաքելութեան մէջ:

Նոյն օրը, Պետական ներկայացուցիչը նամակ մը յանձնելով շնորհաւորեց «Սիփան» եւ «Նանօր» պարախումբերու հայրենի պարուսոյց եւ գեղարուեստական դեկավար Պրմ. Պետրոս Ղարիպեանը, իր տարած բժախնդիր աշխատանքին համար, որ պսակուեցաւ աննախընթաց յաջողութեամբ:

Չորեքշաբթի, 5 Յունիս 2013-ին, Պրմ. Վարդգէս Մահտեսեան շնորհաւորագիր մը յղեց Կիպրոսի Հայոց Թեսնի Կաթողիկոսական Փոխանորդ Գերշ. Տեր Վարուժան Արք. Տերկելեանին, «Արծիւ» ամսաթերթի 20-ամեակին եւ «Գառնի» մատենաշարի 25-ամեակին ուրախ առիթներով, մաղթելով երկարամեայ գործունեութիւն եւ իրատարակութիւններու շարունակականութիւն՝ ի նպաստ Հայ գիրի ու գրականութեան տարածման:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈյ

Միայն մէկ ելոյթ

«Ժողովրդական Երգիչ» Համոյթ

Չարաթ, 9 Նոյեմբեր 2013, ժամը 19:00-ին
Ստրովոլոսի Քաղաքապետարանի Սրահ
Նիկոսիա

Մասնակցութեամբ՝
Հայրենի «Ժողովրդական Երգիչ» նախագիծի
Լաւագոյն երգիչներուն եւ նուազախումբին

Ինչպէս նաեւ
Համազգայինի «Սիփան» պարախումբին

«Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետութեան
Օրէնքներուն» բաժինը լոյս պիտի տեսնէ «Լրատու»ի
յաջորդ թիւով, չծանրաբեռնելու համար մեր ընթերցողները:

ՈՒԾԱԴՐՈՒԹԻՒՆ

Ամառուայ արձակուրդի շրջանին,
 Երեսփոխանական Գրասենեակը
 փակ պիտի մնայ
 Երկուշաբթի, 12 Օգոստոսէն
 մինչեւ
 Կիրակի, 1 Սեպտեմբեր 2013-ը:

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
 Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42
 Ել. Հասցե office@armenianmp.com
 Ուստայնեց՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
 Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42
 Ել. Հասցե vmahdessian@parliament.cy